

Հ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ, ԱՌԱՐԿԱ ԱՆՎԱՆՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՃԱ - ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դիտարկված են հայերենում, ռուսերենում, անգլերենում հանդիպող բնության երևույթ և առարկա անվանող բաղադրիչներով դարձվածային միավորների ձևավորման ոճա-արտահայտչական միջոցները: Ներկայացված են պատկերավորության միջոցների ընդհանրություններն ու տարբերությունները դիտարկվող լեզուներում:

Առանցքային բառեր. ոճական և արտահայտչական միջոցներ, փոխաբերություն, համեմատություն, չափազանցություն, օքսիմորոն, շրջասություն, էվֆեմիզմ:

Դարձվածքների առաջացումը կապված է բառակապակցությունների վերափոխման հետ, որն էլ կատարվում է պատկերավորության տարբեր միջոցների օգտագործմամբ: «Դարձվածային միավորները արժեքավոր են խոսքի այլաբանական, փոխաբերական, շրջասացական և այլ կարգի ոճավորումների տեսակետից: Հանդես գալով ոճական զանազան եղանակներով՝ սովորական բառերի և բառակապակցությունների հետ միասին դարձվածային միավորները դառնում են գրականության լեզվի, հեղինակային ոճի դրսևորման ինքնատիպ ու յուրահատուկ միջոցներ» [1]: Բազմաթիվ դարձվածքներ ձևավորվում են ոճական և արտահայտչական այնպիսի միջոցներով, ինչպիսիք են փոխաբերությունը, չափազանցումը, շրջասությունը, փոխանունությունը, համեմատությունը և այլն:

Փոխաբերություն: Հիմնվելով զանազան իրողությունների և երևույթների նմանությունների ու զուգորդությունների վրա՝ խոսքն ավելի պատկերավոր և տպավորիչ դարձնելու նպատակով ժողովուրդը օգտագործել է փոխաբերություններ, որոնք հիմնված են ոչ միայն զգայական ընկալումների, դիտարկումների և կենսափորձի վրա, այլև երևակայական, իրականության մեջ գոյություն չունեցող առարկաների և երևույթների նմանության վրա՝ *քամի տալ* - գովաբանելով գրգռել, հրահրել, *հողով-ջրով կորչել* - անսերունդ մնալ, *կրակի վրա յուղ լցնել* - բորբոքել, *գլխին (սև) ձյուն գալ* - մեծ վշտի հանդիպել, ծերանալ, *շան քթից ջուր խմել* - շատ չարչարվել, *երկու կրակի/ջրի/քարի արանքում մնալ* - անելանելի վիճակի մեջ գտնվել: Փոխաբերությունները կարող են հիմնված լինել պատրաստի, կայուն համեմատությունների վրա, որոնք կրճատվելով վերածվել են փոխաբերությունների՝ *ջանը կրակ ընկած* - եռանդուն, անհանգիստ: Մեծ թիվ են կազմում այն դարձվածքները, որոնք ամբողջությամբ փոխաբերաբար կիրառ-

ված կապակցություններ են [2]՝ *ծագող աստղ, ջրի երես հանել, կրակի կտոր, մեկի ջրադացին ջուր լցնել, կրակին յուղ ավելացնել, ուրքերի փակ հողը այրվել*: Ռուսերենում նույնպես խոսքն ավելի պատկերավոր դարձնելու համար օգտագործվում է փոխաբերությունը՝ *восходящая звезда* - փառք, ճանաչում ձեռք բերել, *звезда первой величины* – հայտնի՝ նշանավոր մարդ, *считать звезды* - երագել, ցրված լինել, *с луны свалился* - գործից անտեղյակ լինել, *подливать масла в огонь* – հրահրել, հարաբերությունները սրել, *унустить огонь* – պահը բաց թողնել, *зарывать талант в землю* – չօգտագործել ընդունակությունները, *мировая скорбь* – վատատեսություն, *небо коптит* - աննպատակ ապրել, *нащупывать почву* – նախապես պարզել հնարավորությունները, *днем с огнем* – մեծ դժվարությամբ: Անգլերենում փոխաբերությունը կարող է հիմնված լինել ամենատարբեր երևակայական պատկերացումների, տպավորությունների, զգայությունների վրա՝ *with one's nose in the air* – ուրիշներին վերևից նայել, *fire in one's belly* - նախաձեռնություն, ձգտում, *put one's fingers in the fire* – ռիսկի դիմել, անախորժությունների մեջ ընկնել:

Չափազանցություն: Կիրառվում է որևէ երևույթ կամ նրա հատկանիշը շեշտելու, ընդգծելու և ավելի պատկերավոր ներկայացնելու համար՝ *երեսի գոյնը գեպին կաթել* – շատ առողջ լինել, *երկինք հանել/բարձրացնել* – չափից ավելի մեծարել, գովաբանել, *կրակ կտրել/դառնալ* – խիստ ոգևորվել, սաստիկ զայրանալ, չափազանցվում են ոչ միայն գոյություն ունեցող, այլև անհնարին իրավիճակներ, համադրվում են անհամատեղելի հասկացություններ՝ *աչքը ջուր դառնալ, երկնքից աստղեր իջեցնել*:

Չափազանցությունը կարող է գործածվել նաև երևույթների բացասական, ծիծաղաշարժ կողմերը նշելու, երգիծական և կոմիկական իրավիճակներ ստեղծելու նպատակով: Ռուսերենում չափազանցությունը կիրառվում է համեմատաբար ավելի քիչ դարձվածքներում՝ *ни за какие блага в мире* – ոչ մի դեպքում, *ходить, бродить по всему миру* - ամենուր թափառել, *семь верст до небес и все лесом* – շատ բան խոստանալ, ասել, *аж небу жарко* – լարված գործողություններ, *превозносить до небес* - շատ գովել, *хватать звезды с неба* – շատ հնարագետ, ճարպիկ լինել, երկնքից աստղեր վար բերել, որևէ անհնարին բան կատարել: Անգլերենում չափազանցությունը շեշտում, ընդգծում է անհավանական, երևակայական իրավիճակ կամ երևույթ՝ *smell / stink to high heaven* – վատ հոտ արձակել (մինչև երկինք), *have the world at one's feet* – մեծ հաջողություն ունենալ, *with the best will in the world* – նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում, *set the world to rights* – լուծել աշխարհի խնդիրները, *one would give the world to know* - ամեն ինչ (աշխարհը) կտայի, որ իմանայի, *the weight of the*

world on one's shoulders – ծանր բեռ (աշխարհի բեռը) մեկի ուսերին, *not for all the world* – ոչ մի դեպքում, *move heaven and earth* – հնարավոր ամեն ինչ անել, *praise smb to the skies* – գովաբանել, երկինք բարձրացնել, *all the world knows* – ամբողջ աշխարհը գիտի, *set the Thames (the world) on fire* – անհավանական բան անել (բառացի՝ Թեմզա գետը հրդեհել), *all the world and his wife* – բոլորը առանց բացառության, *heaven on earth* – երկրային դրախտ:

Շրջասություն: Ոճական հնար է, երբ որևէ առարկա կամ երևույթ ուղղակի անվանելու փոխարեն տրվում է ավելի ծավալուն, նկարագրական բնութագրություն [3], նշվում են նրա բնորոշ հատկանիշները, որոնք խոսքին հաղորդում են պատկերավորություն, հաճախ կիրառվում են առօրյա-խոսակցական ոճում, երբեմն նաև հրապարակախոսական ոճում՝ *աստղերը ուղի ընկնել* – գիշերը անցնել, *անջուր*, *անկրակ այրվել* – ինքն իր վշտից տանջվել: Շրջասությունները ոչ միայն անուղղակի անվանում են հասկացությունը՝ ավելի ներգործուն տպավորություն ստեղծելու համար՝ *տաքդեղի ջուր* – *օղի*, այլև կարող են օգտագործվել տպավորությունը մեղմացնելու կամ գիտեցածը թաքցնելու համար (ծածկաբանություն)՝ *հոտած ջուր* – նավթ, *սպիտակ/ճերմակ ջուր*, *անծուխ կրակ* – օղի, *կարմիր ջուր* – գինի: Ժողովրդի նրբանկատությունը, արտահայտման զգուշավորությունը, էթիկական նպատակներով գործածվող ծածկաբանությունները, որ կոչվում են էվֆեմիզմներ [4], միևնույն երևույթը կարող են անվանել բազմաթիվ տարբեր ձևերով՝ մեռնել – *արևը բաշխել*, *արևը խավարել*, *արևը սևանալ*, *աստղի լույսը խավարել*, *հողը մտնել*, *այն աշխարհը գնալ*, *աշխարհի հետ հաշիվները փակել*, *երկինք գնալ*, *երկնային քուն մտնել* և այլն: Վերախմաստավորված շրջասական կայուն կապակցությունները դառնում են դարձվածքներ [5]:

Ռուսերենում այս հնարքով են կազմված *на краю земли* – *հեռու, попадаты пальцем в небо* – *սխալվել, ложиться в землю, уходит в лучишый мир, отойти от мира сего* – *մեռնել, небо с овчинку кажется* – *վախենալ, սարսափել* դարձվածային միավորները, որոնցում ծավալուն, նկարագրական բնութագրությունը ավելի պատկերավոր է դարձնում արտահայտած միտքը: Անգլերենում *մեռնել* իմաստը կարող են արտահայտել *go to a better world, go to the other world, go to the next world* դարձվածքները, որոնք փոքր-ինչ մեղմացնում են միտքը: Նկարագրական բնութագրությամբ են հանդես գալիս նաև հետևյալ դարձվածքները՝ *a child of the soil (a son of the soil, a daughter of the soil)* – *տեղաբնակ, գեղջուկ, fires of heaven* – բառացի՝ երկնքի կրակներ, աստղեր, *Tom Tiddler's ground* – *հարստանալու վայր, the dark and bloody ground* – (ամեր.) *մռայլ, արյունոտ նահանգ* (ասվում է *Կենտրոնի նահագի մասին*):

Փոխանունություն: Այլաբերության տեսակ է, որ խոսքին պատկերավորություն է տալիս, բառակապակցությունը գործածվում է մեկ այլ բառի կամ բառակապակցության փոխարեն, որի հետ ունի տրամաբանական կամ պատճառահետևանքային կապ՝ սերում, պարունակողի և պարունակյալի, մասի և ամբողջի հարաբերություն: Փոխանվանական իմաստի վրա հիմնված դարձվածքների մեծ մասը սոմատիկ դարձվածքներ են, որոնց հետ երբեմն զուգորդվում են բնության առարկաները՝ *աչքը ջուր խմել* – հասկանալ, *սրտից ջուր խմել* – մեկի ուզածն անել, *ոտները սև ջուր իջնել* – երկար կանգնելուց հոգնել, *երեսի ջուրը թափվել* – ամոթահար լինել, խայտառակվել, *աշխարհը ոտքի տակ տալ* – շրջագայել, թափառել և այլն: Ռուսերենում և անգլերենում համեմատաբար սակավաթիվ են փոխանունության ոճական հնարքով կազմված դարձվածքները՝ *мерить землю* – քայլել, մեծ տարածություն անցնել ոտքով, *с миру по нитке* – բոլորից քիչ-քիչ հավաքելով նշանակալի բան է ստացվում, *соль земли* – կարևոր, գլխավոր, *мир тесен* – ցանկացած տեղում կարելի է ծանոթի հանդիպել, *пун земли* – տիեզերքի կենտրոնը: Անգլերենում հանդիպում է *keep one's head above water* – պայքարել դժվարությունների դեմ, որտեղ մարմնի մասի անվանումը գործածված է մարդու փոխարեն:

Համեմատություն: Դարձվածքներ կազմելու ոճական հնար է, լեզվի պատկերավորման միջոց, որի դեպքում որևէ առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի պատկերավոր ու տպավորիչ դարձնելու համար զուգադրվում է մեկ ուրիշ, ավելի ծանոթ առարկայի կամ երևույթի բնորոշ հատկանիշի հետ՝ *կրակի պես կարմիր, արևի պես պարզ, կարկուտի պես, գիսավոր աստղի պես փայլել, հին, ինչպես աշխարհը, ջրի պես գնալ, ավազի պես մնալ, ջրի պես իմանալ, ինչպես երկինքը՝ երկրից, ինչպես ջրի երկու կաթիլ, մի բաժակ ջուր խմելու պես/չափ, ինչպես որոտը պայծառ երկնքից, ջանը կրակ ընկածի պես*: Բնության երևույթ, առարկա անվանող բաղադրիչներով համեմատություն դարձվածքները բավականին շատ են դիտարկվող երեք լեզուներում, և կարող են լինել ածականական, մակբայական և բայական: Համեմատություն - դարձվածքները կազմվում են *պես, նման, չափ, ինչպես, ասես, կարծես* կապերով և կապական բառերով, որոնց միջոցով մի հատկանիշ կամ գործողություն համեմատվում է մի ուրիշ առարկայի կամ հատկության հետ:

Ռուսերենը հարուստ է համեմատություն դարձվածքներով, որոնցում առարկաների, երևույթների հատկանիշները համեմատվում են և ավելի պատկերավոր դարձնում խոսքը՝ *как в воду опущенный, как ветром сдуло, как в воду канул, как небо и земля, как птица небесная, как/словно из-под земли вырос, как манны небесной, как на вулкане, как рыба в воде, как с гуся вода, как с*

луны свалился, как с неба свалился, как снег на голову, как гром среди ясного неба, как две капли воды, как лунь седой. Համեմատությունները հիմնականում կազմվում են *как, будто, словно, точно* կապական բառերով, որոնց միջոցով էլ իրականացվում է համեմատությունը:

Անզլերենը նույնպես հարուստ է համեմատություններով՝ *as weak as water, as white as snow, as red as fire, as hot as fire, as quick as lightning, like a full moon, like wildfire, thick as hail, as right as rain, as black as thunder, as silent as the stars, like a house on fire, free as the air, as light as air, free as the wind*, որոնք կազմվում են նմանության հիման վրա, *as, like* կապերի միջոցով: Համեմատություն-դարձվածքներ են նաև բաղդատական *than* շաղկապով կազմված *blood is thicker than water* - արյունը ջուր չի դառնա, *louder than thunder* – որոտից էլ ուժգին դարձվածային միավորները:

Դարձվածքների պատկերավորման միջոց են նաև *կրկնությունը*, որը ուժգնացնում և լրացնում է դարձվածային միավորների հուզարտահայտչական գունավորումը՝ (*երկրեերկիր ընկնել, աշխարհեաշխարհ ընկնել, լուսին-լուսին* – ոչ հաճախ, *հողեցհող* - ամբողջովին), *աստիճանավորումը*, որի գործածությամբ սաստկացվում կամ թուլացվում է գործողության, իրավիճակի, երևույթի բնութագրությունը՝ (*հայերենում՝ անձրևից փախչել, կարկուտի տակ ընկնել, կրակից դուրս գալ, բոցի մեջ ընկնել, մրից ելնել, մրջյուն ընկնել - ավելի վաղ վիճակի մեջ ընկնել, ռուսերենում՝ из огня да в полымя* – վատ վիճակից առավել վատ վիճակի մեջ ընկնել), *հարանունությունը*, որտեղ զուգադիր մասերում օգտագործվում են նման հնչյունական կազմ ունեցող բառեր՝ (*քարի պես քաղվել, հողի պես մաղվել, աշխարհը դմակ՝ մարդը դանակ, քամու բերած՝ քամու տարած* (դարձվածքի ներսում առկա է *հակադրություն*), ռուսերենում՝ *мир дунет ветер будет, мир плюнет море будет* – մարդիկ միասին ամեն ինչ կարող են: Պատկերավորման միջոց են նաև *պարադոքսը*, որը ընդունված տեսակետին չհամապատասխանող արտասովոր, հակասական տպավորությամբ արտահայտում է տրամաբանորեն անհամատեղելի դատողություն՝ *ջրից չոր դուրս գալ, ամպրոպ պարզ երկնքից, անզլերենում՝ a bolt in the clear (blue) sky, օքսիմորոնը*, որը կազմվում է հակիմաստ, անհամատեղելի բառերի զուգորդությամբ՝ խոսքի արտահայտչականությունը ուժեղացնելու համար՝ *անձյուն ձմեռ, անջուր ջրաղաց, անծուխ կրակ, անկրակ վառել* (*ան* ժխտական նախածանցով ածականներ, որոնք հատուկ չեն տրված գոյականներին և բայերին), անզլերենում հանդիպում է *հանգավորում՝ a pie in the sky* (դրախտ երկնքում) և այլն:

Եզրակացություն: Պատկերավորման գրեթե բոլոր միջոցները օգտագործվում են դիտարկվող երեք լեզուներում, սակայն ելնելով լեզվի և լեզվամտա-

ծողության յուրահատկություններից, որոշ ոճական և արտահայտչական միջոցներ առավել կիրառական են մի լեզվի դարձվածային միավորների կազմավորման մեջ, մյուսները հանդիպում են դիտարկվող մեկ կամ երկու լեզուներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Համբարձումյան Վ.Գ.** Հովհան Մամիկոնյանի 'Տարոնի պատմության' լեզուն և ոճը.- Երևան: ՀՀ ԳԱԱ 'Գիտություն' հրատ., 2013, էջ 60. - 172 էջ:
2. **Բեդիրյան Պ.Ս.** Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն.- Երևան: Լույս հրատ., 1973, էջ 100. - 231 էջ:
3. **Եզեկյան Լ.** Հայոց լեզվի ոճագիտություն.- Երևան: Երևանի համալս. հրատ., 2003, էջ 349. - 375 էջ:
4. **Խլղաթյան Ֆ.** Ոճաբանական բառարան. -Երևան:"Չանգակ-97" հրատ., 2000, էջ 61. - 188 էջ:
5. **Բեդիրյան Պ.Ս.** Հայերեն շրջասությունների բառարան.- Սբ.Էջմիածին, ՌԼԾԱ, 2002, էջ 9. - 335 էջ:

А.Г. ПЕТРОСЯН

СТИЛИСТИЧЕСКИ ЭКСПРЕССИВНЫЕ СРЕДСТВА ФОРМИРОВАНИЯ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ С КОМПОНЕНТАМИ ЯВЛЕНИЙ И ОБЪЕКТОВ ПРИРОДЫ В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

Рассматриваются стилистически экспрессивные средства формирования фразеологических единиц с компонентами явлений и объектов природы в армянском, русском и английском языках. Представлены сходства и различия экспрессивных средств в данных языках.

Ключевые слова: стилистические и экспрессивные средства, метафора, сравнение, гипербола, оксиморон, перифраза, эвфемизм.

H.G. PETROSYAN

STYLISTIC-EXPRESSIVE MEANS OF FORMING PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENTS NAMING NATURAL PHENOMENA AND OBJECTS IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH

Stylistic-expressive means of forming phraseological units with the components naming natural phenomena and objects in Armenian, Russian and English have been considered. The similarities and differences of expressive means in the given languages have been introduced.

Keywords: stylistic and expressive means, metaphor, simile, hyperbole, oxymoron, periphrasis, euphemism.